Երկիր Ծիրանի

Վանաձորի քաղաքապետ

Մամիկոն Ասլանյանին

«Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ

Մարինա Խաչատրյանից

Հեռ՝ +374.98.11.04.81

+374.55.40.39.00

էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com

27.04.2018թ.

ԴԻՄՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի մայիսի 1-ին և մայիսի 2-ին Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում Զարուհի Փոստանջյանը նախատեսում է անցկացնել շտապ հավաք և Արցախ պուրակից երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 17:00–ին և ավարտվելու է ժամը 23:00-ին:

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վարչակարգի բռնությունների:

Կազմակերպիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 5000: Երթի երթուղին է՝ Արցախի պուրակ-Տիգրան Մեծի փողոց-Թումանյան փողոց-Գր. Լուսավորչի փողոց-Հայքի հրապարակ-Տիգրան Մեծի փողոց-Արցախի պուրակ: Երթը սկսվելու է 17:00-ին և ավարտվելու է 23:00-ին:

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, բուկլետներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով (Հոդված 27. Ինքնաբուխ եւ շտապ հավաք անցկացնելու կարգը)՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Կից ներկայացվում է՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«02» 05 2018թ.
Մուտք N 079 Գործ N 09